ՉԱՓԱՆԻՇ 8. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՀ-Ն ԻՐ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԵՏՈՒ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը միտված է ապահովելու իր կողմից իրականացվող կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը, իր գործունեության մասին ամենամյա հաշվետվության հրապարակումը և դրան ծանոթանալու մատչելիությունը (**ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, /III/12/7, V/17/2,5**):

Իր գործունեությամբ մասնաճյուղը հակված է ապահովելու հասարակության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույնս ներգրավումը (**ԵՊՀ ԻՄ-ի զարգացման ռազմավարական ծրագիր, խնդիր III ա**), աջակցելու տարածաշրջանի հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով մասնաճյուղի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը, մատուցելու խորհրդատվական, փորձագիտական ծառայություններ (**ՌԾ, նպատակ III, ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, III/12/9, III/15/5**):

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.1. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Վերլուծենք, թե որքանով է մասնաճյուղի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը:

ԵՊՀ ԻՄ-ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքով, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ, նրա կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերով:

Կրթական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներից է (**Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենք, հոդված 4/4**):

ԵՊՀ ԻՄ-ի հաշվետվողականության՝ «կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը» մասնաճյուղի նպատակներից մեկն է (**ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, /III/12/7**):

Իր գործունեության մասին ամենամյա հաշվետվության, օրենքով նախատեսված դեպքում նաև ֆինանսական հաշվետվությունների աուդիտի եզրակացության հրապարակումը, այդ հաշվետվություններին ծանոթանալու մատչելիության ապահովումը մասնաճյուղի պարտականություններից է (**ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, V/17/2,5**):

Մասնաճյուղում գործում է աստիճանակարգային (վարից վեր, վերից վար) հաշվետվողականության սկզբունքը, որը սահմանված է ըստ ստորաբաժանումների կանոնադրությունների և կանոնակարգերի:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում դասախոսը ամբիոն է ներկայացնում իր աշխատանքային անհատական զարգացման պլանի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն մի շարք ենթակետերով («Գրականության ուսումնասիրություններ», «Գիտական, գիտամանկավարժական և գիտամեթոդական հետազոտություններ», «Մասնագիտական աճի ապահովում», «Գիտամանկավարժական կադրերի պատրաստում, վերապատրաստում, որակավորման բարձրացում, վերարակավորում», «Ուսումնական աշխատանքներ», «Մանկավարժական առաջավոր փորձի փոխանակում»):

Ապա առանձնացվում են դասախոսի կողմից պլանավորված, սակայն չիրականացված աշխատանքները՝ դրանք հետագայում իրականացնելու նպատակով:

Հաշվետվության այս ձևը նպաստում է, որ դասախոսը առավել ուշադրություն դարձնի իր մասնագիտական և գիտամանկավարժական գործունեությանը:

Տարեկան աշխատանքային պլանի համաձայն՝ ամբիոնի վարիչը ամբիոնում իրականացված ուսումնագիտական աշխատանքների և հրատարակությունների մասին հաշվետվություն է տալիս ամբիոնին և ֆակուլտետի գիտական խորհրդին:

Ամբիոնի վարիչի հաշվետվությունը հնարավորություն է տալիս գնահատելու ամբիոնի գործունեության արդյունավետությունը, վերհանելու թերությունները, քայլեր ձեռնարկելու դրանք վերացնելու ուղղությամբ:

Ֆակուլտետի խորհրդի տարեկան աշխատանքային պլանի կատարողականի վերաբերյալ դեկանը հաշվետվություն է տալիս ֆակուլտետի և մասնաճյուղի գիտական խորհուրդներին **(ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների կանոնադրություններ, գիտական խորհրդի կանոնակարգ)**:

Այս հաշվետվությունը նպաստում է ֆակուլտետի ձեռքբերումների և բացթողումների վերհանմանը, վերջիններիս պատճառների բացահայտմանը, աշխատանքային պլանների վերանայմանը և դրանց բարելավմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողովը ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդին ներկայացնում է մասնաճյուղում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարողականների վերաբերյալ հաշվետվություն՝ ըստ առանձին ուղղությունների («Գիտելիքների գնահատում, ուսումնական գործընթացի վերահսկում, փոխատեղում և տեղափոխություններ», «Քարոզչական և նախազգուշական աշխատանքների իրականացում, տեղեկացվածության մակարդակի բարձրացում», «Ուսանողական հարցումներ», «Ներքին իրավական ակտեր», «Ուսանողական կազմակերպություններ, աշխատանք ուսանողների հետ», «Անձնակազմի կառավարում և գնումների գործընթացը») **(ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի՝**

2013-2014թթ. համալիր միջոցառումների ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն):

Սույն հաշվետվությունը նպաստում է ԵՊՀ ԻՄ-ի կոռուպցիոն ռիսկերի և երևույթների կանխարգելմանը, դրանց նկատմամբ շարունակական հսկողության իրականացմանը, թափանցիկության ապահովմանն ու իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, մասնաճյուղում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի զարգացմանը:

Մասնաճյուղի ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա տնօրենը ԵՊՀ ԻՄ-ի տարեկան գործունեության վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում մասնաճյուղի գիտական խորհրդի տարեվերջյան ընդլայնված նիստում, ապա ԵՊՀ Գիտական խորհրդի նիստում (**ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, VI/28/4**):

Վերջին երկու տարիներին բարելավվել է տնօրենի հաշվետվության ձևաչափը. հաշվետվությունը ներկայացվում է ըստ մասնաճյուղի 2011-15թթ զարգացման ռազմավարական ծրագրի պլան-ժամանակացույցով նախատեսված գործողությունների իրականացման ընթացքի, ֆինանսական տարվա եկամուտների ու ծախսերի և «Կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի» կատարողականների վերաբերյալ:

Տնօրենի տարեկան հաշվետվությունները հրապարակվում են մասնաճյուղի պաշտոնական կայքէջում (http://ijevan.ysu.am/documents/reports/): Դրանք հիմնված են մասնաճյուղի գործունեության մշտադիտարկման տվյալների վրա, նպաստում են ներքին և արտաքին շահակիցների առջև հաշվետվողականության և թափանցիկության ապահովմանը: Հաշվետվության պատրաստման և քննարկման պրոցեսում հնչած առաջարկները նպաստում են կառավարման համակարգի բարելավմանը:

Մասնաճյուղի գործունեության արդյունավետությունը և կատարողականը գնահատելու, ձեռքբերումները և թույլ կողմերը վերհանելու նպատակով մասնաճյուղը յուրաքանչյուր տարի համալրում է իր գործունեության առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) վերաբերյալ տեղեկատվությունը: ԳԱՑ-ը պարունակում է ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 6 հիմնական ոլորտների («Ընդունելություն և համակազմ», «Ուսումնական գործընթաց», «Ռեսուրսներ և կառավարում», «Ենթակառուցվածքներ», «Գիտություն և նորամուծություն», «Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն») մասին տվյալներ: Ամբողջ տեղեկատվությունը վերլուծվում, հրատարակում, տրամադրվում է մասնաճյուղի ստորաբաժանումներին և տեղադրում մասնաճյուղի կայքէջում:

Հաշվետվողականության այս համակարգը նպաստում է մասնաճյուղի կառավարման բարելավմանը. գնահատվում է կատարված աշխատանքների արդյունավետությունը, վեր են հանվում ձեռքբերումները և բացթողումները՝ դրանց պատճառները բացահայտելու, մասնաճյուղի հետագա գործունեությունը բարելավելու նպատակով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.2. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Վերլուծենք մասնաճյուղում հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը:

Հանրային կապերի ոլորտում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքականության նպատակները, խնդիրներն ու իրականացման մեխանիզմներն սահմանված են համապատասխան քաղաքականությամբ **(2014թ. մայիսի 27-ի՝ գիտական խորհրդի նիստ):** Մասնաճյուղի տնօրենի, կառուցվածքային ստորաբաժանումների, հասարակական միավորումների (արհբյուրո, ուսանողական գիտական ընկերություն, ուսանողական խորհուրդ և այլն), այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակությանն իրազեկվում է մասնաճյուղի պաշտոնական կայքի (ijevan.ysu.am), «Երևանի համալսարան» ամսաթերթի միջոցով:

Մասնաճյուղի ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունն ապահովվում են մի շարք մեխանիզմներով:

2011թ. հոկտեմբերի 1-ից գործում է մասնաճյուղի վեբկայքը **/http://www.ijevan.ysu.am/**, որը ԵՊՀ ԻՄ-ի գործունեության լուսաբանման, թափանցիկության ապահովման ամենամատչելի և կարևոր միջոցներից մեկն է:

Մասնաճյուղի ընդհանուր և ընթացիկ կառավարման գործընթացների հասանելիությունն ապահովելու նպատակով ԵՊՀ ԻՄ-ի կայքէջի «Փաստաթղթեր» /http://ijevan.ysu.am/documents/ բաժնում պարբերաբար տեղադրվում են ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշումներն ու նիստերի արձանագրությունները, բոլոր կանոնադրությունները, կանոնակարգերը և կարգերը, հայեցակարգերը, այլ նորմատիվ փաստաթղթեր, մասնաճյուղի տնօրենության որոշումներն ու նիստերի արձանագրությունները:

Ուսումնական գործընթացների թափանցիկությանն են միտված կայքում տեղադրվող բակալավրի կրթական ծրագրի տեղեկագրքերը, մասնագիտությունների ուսումնական պլանները, կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքերը, դասացուցակն ու քննաշրջանի ժամանակացույցները և ուսանողների առաջադիմության ամփոփները, ամբիոնների աշխատանքային պլանները, խորհրդատվական ծառայությունների, ամբիոնների նիստերի և փոխադարձ դասալսումների ժամանակացույցները, պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների գիտամեթոդական աշխատանքների ցուցակը, դեկանի, ամբիոնի վարիչի, պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների մրցույթների վերաբերյալ հայտարարությունները, տարբեր իրադարձություններ, նորություններ:

Դասախոսների գիտական աշխատանքների և ձեռքբերումների մասին տեղեկացնելու, տարածաշրջանում ու ՀՀ-ում գիտական մտքի զարգացմանը նպաստելու նպատակով կայքում տեղադրվում են «Ակունք» գիտական հոդվածների բոլոր

ժողովածուները **/http://ijevan.ysu.am/science/collection-of-scientific-articles/** և գիտական այլ ժողովածուներ **/http://ijevan.ysu.am/science/conference-materials/**:

Մասնաճյուղի շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին իրազեկելու, նրանց կարիերային նպաստելու նպատակով կայքում դրվում են խորհրդատվություններ և հայտարարություններ՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններում:

ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջի «Ինֆորմացիա» (http://ijevan.ysu.am/information/) բաժնի «ԶԼՄ-ները մեր մասին» (http://ijevan.ysu.am/information/media-about-us/) էջում տեղադրված են 2010 թ.-ից մինչ օրս մասնաճյուղի մասին տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված հոդվածներ ու տեսանյութեր:

Մասնաճյուղի էլ.կայքի՝ որպես նրա գործընթացների հրապարակայնության և թափանցիկության ապահովման գլխավոր միջոցի վերաբերյալ 2015թ. բուհում անցկացվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի, շրջանավարտների բավարարվածության հարցումներ, որոնց միջոցով պարզվել է հարցման մասնակիցների կարծիքը կայքի կառուցվածքից, տեղեկատվության ստացման հարմարավետությունից, լիարժեքությունից, նորությունների լուսաբանումից, կայքի ընդհանուր գրավչությունից /դիզայնից/:





Ներկայացված դիագրամները ցույց են տալիս, որ հարցման մասնակիցները բավարարված են հատկապես կայքի կառուցվածքից, նրա միջոցով տեղեկատվության ստացումից, նորությունների լուսաբանումից:

Մասնաճյուղի գործընթացների հասանելիությունն ապահովող մյուս մեխանիզմը «Երևանի համալսարան» ամսաթերթն է:

2012-2014թթ. «Երևանի համալսարան» ամսաթերթում տպագրվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական առօրյային, Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսներին, մասնաճյուղում կազմակերպված գիտաժողովներին, արտասահմանյան բուհերի ներկայացուցիչների այցերին վերաբերող 10 հոդված (http://ysu.am/newspaper/hy#.VZTw6Bvtmkp):

ԵՊՀ ԻՄ-ի տեղեկատվական քաղաքականության իրականացման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի պետական համալսարանի և այլ պաշտոնական կայքերից ևս ձեռք են բերվում անհրաժեշտ տեղեկություններ և մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով լուսաբանվում:

Հանրային կապերի (PR-public relations) ոլորտում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության իրականացման շրջանակներում պարբերաբար իրականացվում են մի շարք աշխատանքներ:

ԵՊՀ ԻՄ-ի հասարակական վարկանիշը բարձրացնելու, նրա գովազդարշավն ընդլայնելու և ակտիվացնելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպությունների են տրամադրվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի, կիրառական արվեստի ֆակուլտետի և հեռակա ուսուցման բաժնի գովազդային բուկլետները:

Մասնաճյուղի բուկլետում զետեղված են նրա հիմնադրման, կառուցվածքի, ուսումնամեթոդական և գիտական գործընթացի կազմակերպման, ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկություններ:

Կիրառական արվեստի ֆակուլտետի բուկլետում ներկայացված են ոչ միայն ֆակուլտետի մասին տեղեկություններ, այլև ուսանողների՝ արվեստի տարբեր ճյուղերի հաջողված աշխատանքներ:

Հեռակա ուսուցման բաժնի բուկլետում հայերենով և վրացերենով տրված են բաժնի ստեղծման, գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկություններ:

Մասնաճյուղը պարբերաբար ապահովում է գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը՝ տարածաշրջանի հանրակրթական հաստատություններին անվճար տրամադրելով ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը:

ԵՊՀ ԻՄ-ի մասին տեղեկատվություն է հրապարակվում նաև «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», «YEREVAN STAT UNIVERSITY”, «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ», “IJEVAN” տեղեկագրքերի մեջ, «Սփյուռ» տեղեկատվական կենտրոնի հրատարակած «Հայաստանի դեղին էջեր» ժողովածուում և տարբեր կայքերում՝ «Երիտասարդական online պարբերական»-ում, “DASARAN.AM” կայքում, «Հույսի կամուրջ» ՀԿ-ի Իջևանի երեխայի

զարգացման ցերեկային կենտրոնի բլոգում, “ARAVOT.AM” կայքում, “ARMENPRESS”-ում և այլն:

Մասնաճյուղի կարևոր իրադարձությունների, գիտաժողովների, մրցույթների, ցուցահանդեսների, տարաբնույթ միջոցառումների մասին հոդվածներ կան *“1TV.AM”*, *“HAYNEWS.AM”, “TESANKYUN.AM”, “CIVILNET.AM”, “ARMACAD”, “LURER.COM” Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնի* կայքերում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.3. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Վերլուծենք մնասնաճյուղում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի կարևոր խնդիրներից է ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույնս ներգրավումը (**ՌԾ, խնդիր III ա/ Հանրային ներգրավում և ծառայություններ/**):

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման արդյունավետ միջոցներ են հարցումները, արտաքին շահակիցների ներգրավումը գիտխորհրդի կազմում, մասնաճյուղի կայքի հարց ու պատասխանի բաժինը, մարզային տարատեսակ միջոցառումների կազմակերպումը կամ մասնակցությունները դրանց, մշտական այցելությունները տարածաշրջանի համայնքներ, ուսումնական և արտադրական կազմակերպություններ և այլն:

Հարցումները հնարավորություն են տալիս պարզելու արտաքին և ներքին շահակիցների կարծիքը մասնաճյուղի վերաբերյալ, վերհանելու մասնաճյուղի ուժեղ և թույլ կողմերը, նպաստում նրա գործունեության հետագա բարելավմանը:





Արտաքին շահակիցների հետ գործակցային հարաբերություններ զարգացնելու, մասնաճյուղի ծրագրերում, կառավարման համակարգում նրանց ներգրավելու

նպատակով իրականացվում են տարբեր միջոցառումներ, հանդիպումներ, դրանք լուսաբանվում և ներկայացվում են հանրությանը: Օրինակ՝ 2014թ. փետրվարի 10-ին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կազմակերպվել է հանդիպում արտաքին շահակիցների՝ Տավուշի մարզի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների, մարզպետարանի ներկայացուցիչների, բարձրաստիճան զինվորականների, համայնքների ղեկավարների, գործարարների, դպրոցների տնօրենների, լրագրողների, ծնողների հետ: Հանդիպման ընթացքում կարևորվել է արտաքին շահակիցների դերը և ներդրումը մասնաճյուղի գործունեության տարբեր ոլորտներում: ՝ կրթական ծրագրերի համատեղ իրականացում, նեղ մասնագիտական դասընթացների վարում, մանկավարժական և արտադրական պրակտիկաների արդյունավետ անցկացում, շրջանավարտների աշխատանքի տեղավորում և այլն:

Կայքի այցելուներն իրենց հուզող հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար հարցեր են ուղղում մասնաճյուղի տարբեր վարչական և գիտակրթական մարմիններին: Հարցերն ընթերցվում և հասցեագրվում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարին, որի պատասխանն էլ տեղադրվում է կայքում:

Այս մեխանիզմը գործում է 2012թ. սեպտեմբերից և 2015թ. օգոստոս ամսվա դրությամբ տեղադրվել է **39** հարցուպատասխան:

Մասնաճյուղի էլ.կայքն 2015թ. օգոստոս ամսվա դրությամբ ունի 160 էջ, տեղադրված է 1022 նյութ՝ 452 հայտարարություն, 476 նորություն, 74-ը իրադարձություն, 35 գիտական կոնֆերանս, 33 տնօրենության նիստ, 4026 ֆայլ, որոնցից 2843 -ը նկարներ են:

Ըստ տարեթվերի՝ կայքի այցելությունները ներկայացնում են հետևյալ պատկերը.



Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներից են նաև 2011 թվականից “Facebook” սոցիալական ցանցում գործող խումբը (https://www.facebook.com/groups/studentibysu, 2015թ. հոկտեմբերի դրությամբ՝ 1338 անդամ), որի ադմինիստրատորների թվում են մասնաճյուղի ուսանողական կառույցների ղեկավարները, հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուն, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ “Facebook” սոցիալական ցանցում գործող էջը (https://www.facebook.com/ysuib, 2015թ. հոկտեմբերի դրությամբ՝ 1818

հետևորդ), որի ադմինիստրատորներն են կայքի պատասխանատուն, հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուն, ինչպես նաև մասնաճյուղի ՈՒԳԸ-ի էջը (https://www.facebook.com/sssysuib, 2015թ. հոկտեմբերի դրությամբ՝ 352 հետևորդ) և Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի էջը (https://www.facebook.com/shrjanavart, 2015թ. հոկտեմբերի դրությամբ՝ 595 հետևորդ):

Մասնաճյուղի պաշտոնական կայքում առկա նյութերը տարածվում են նշված էջերի և խմբերի միջոցով, էջերի հետևորդները և խմբի անդամները (ուսանողներ ու աշխատակիցներ, դիմորդներ ու շրջանավարտներ, լայն հասարակայնության ներկայացուցիչներ, առհասարակ արտաքին շահակիցներ) կիսվում են մասնաճյուղի հետ առնչություն ունեցող նյութերով, ուղղում են իրենց հետաքրքրող հարցերը, ստանում պատասխաններ, կատարում առաջարկներ և մեկնաբանություններ, թողնում կարծիքներ և գնահատականներ համալսարանի գործունեության տարբեր ոլորտների մասին:

Այսուհանդերձ, հասարակության հետ կապերի ոլորտում հետադարձ կապի գործիքների կիրառումը և այդ մեխանիզմների կարևորումը աստիճանաբար է զարգանում և դեռևս ունի կայացման խնդիր:

ՉԱՓՈՐՈՇԻՉ 8.4. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Վերլուծենք մասնաճյուղի կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը:

Հասարակության շրջանում գիտելիքի տարածումը, նրա կրթական և գիտամշակութային մակարդակի բարձրացումը ամրագրված է որպես ԵՊՀ ԻՄ-ի հիմնական խնդիրներից մեկը **(ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, III/12/9)**: Մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրում սահմանված են մի շարք խնդիրներ, որոնց նպատակն է աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին **(ՌԾ, նպատակ III)**:

Կրթական ծառայություն իրականացնելիս մասնաճյուղը հաշվի է առնում մասնագետների պահանջարկը տարածաշրջանում: Դրանով է պայմանավորված որոշ մասնագիտությունների հետ կապված փոփոխությունները («Բնապահպանություն և բնօգտագործում» - «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» - «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և այլն):

ԵՊՀ ԻՄ-ի հիմնական խնդիրներից է խորհրդատվական, փորձագիտական ծառայությունների մատուցումը **(ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, III/15/5)**: Մասնաճյուղն աշխատանքներ է իրականացնում հանրակրթական դպրոցների աշակերտների և դիմորդների հետ՝ մատուցելով խորհրդատվական ծառայություններ նրանց մասնագիտական կողմնորոշման բնագավառում (մանրամասն տե՛ս **չափանիշ 4, չափորոշիչ ա**):

ԵՊՀ ԻՄ-ի և հանրակրթական դպրոցների միջև փոխադարձ կապի ամրապնդման նպատակով 2013թ. փետրվարի 22-ին ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՄԿ բաժինը Իջևանի ավագ դպրոցի 12-րդ դասարաններում կազմակերպել էր ակնարկային դասախոսությունների շարք՝ մասնաճյուղի առաջնակարգ դասախոսների մասնակցությամբ:

Շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաներ հայտնաբերելու, նրանց հետ անհատական աշխատանք կազմակերպելու, ինչպես նաև ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունները զարգացնելու նպատակով մասնաճյուղում կազմակերպվում է ԵՊՀ-Ի ՄԿՄԿ վարչության կողմից հանրակրթական բոլոր առարկաներից անցկացվող դպրոցական ամենամյա օլիմպադա: 2013թ. օլիմպիադային Տավուշի մարզի 54 միջնակարգ և 4 ավագ դպրոցներից մասնակցել են 29 դպրոցներ՝ 232 աշակերտներով, 2014թ.՝ 23 միջնակարգ և 4 ավագ դպրոցներ՝ 257 աշակերտներով, 2015թ. մասնակցել են 27 միջնակարգ և 4 ավագ դպրոցներ՝ 320 աշակերտներով:

ԵՊՀ ԻՄ-ն ունի մեծ ներդրում տարածաշրջանի գիտական, մշակութային և հասարակական կյանքի կազմակերպման գործում: Այդ մասին են վկայում տարբեր գիտաժողովների, ինտելեկտուալ խաղերի, բանավեճերի, ցուցահանդեսների, գրական-գեղարվեստական, երաժշտական միջոցառումների, երթերի (մասնավորապես Մեծ եղեռնի կապակցությամբ), նախապատրաստական և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

2012-2015թթ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում անցկացվել են շուրջ մեկ տասնյակ հոբելյանական, հանրապետական, միջբուհական հանրապետական ***գիտաժողովներ*** և գիտագործնական ***կոնֆերանսներ*** (http://ijevan.ysu.am/category/scientific-conferences-sessions/), որոնց մասնակցել են ոչ միայն Մայր բուհի, ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցներ, ուսանողներ, մարզի ուսումնական հաստատությունների, մշակույթի ներկայացուցիչներ, հյուրեր, այլև հանրապետության տարբեր բուհերի և ինստիտուտների պրոֆեսորներ, գիտաշխատողներ, ասպիրանտներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերի ներկայացուցիչներ, պետական գերատեսչությունների, քաղաքացիական և հասարակական կառույցների ներկայացուցիչներ, արվեստագետներ, քաղաքացիներ:

2013թ. ապրիլի 27-ին մասնաճյուղում կազմակերպվել է ***Դպրոցականների ինտելեկտուալ խաղ***՝ Տավուշի մարզի 11 դպրոցների (Բերդի վարժարան, Իջևանի և Բերդի ավագ, Այրումի, Ազատամուտի, Աչաջրի, Դովեղի, Թեղուտի, Խաշթառակի, Բերդավանի, Գետահովիտի միջնակարգ դպրոցներ) 12-րդ դասարանի աշակերտներից կազմված 5-հոգանոց թիմերի մասնակցությամբ:

Ամեն տարի Հայոց ցեղասպանության տարելիցի նախօրյակին՝ ապրիլի 23-ին, կազմակերպվում է ***ջահերով երթ***՝ Իջևանի քաղաքային շատրվանների հրապարակից դեպի Ցեղասպանության զոհերի հուշահամալիր, որին ակտիվորեն մասնակցում են ոչ միայն մասնաճյուղի ուսանողները, այլև մարզի տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, բազմաթիվ քաղաքացիներ:

2011-2015թթ. Կիրառական արվեստի ֆակուլտետի կողմից կազմակերպվել են տոներին և հիշատակի օրերին (Կանանց, Մայրության և գեղեցկության, Բերք ու բարիքի տոներին, Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, Շուշիի ազատագրմանը, Հաղթանակի և խաղաղության օրվան, Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին, ԵՊՀ-ի կազմավորման 95-ամյակին) նվիրված ցուցահանդեսներ, Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների, ուսանողների և շրջանավարտների աշխատանքների, Տավուշի և Լոռու մարզերի գեղանկարիչների ստեղծագործությունների ցուցադրություններ ***(մանրամասն տե՛ս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2011-2012, 2012-2013, 2013-2014, 2014-2015 ուստարիների գործունեության հաշվետվությունները):***

2013-2015թթ. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում իրականացվել են նախապատրաստական և վերապատրաստման դասընթացներ: 2013թ. ապրիլին Տավուշի մարզի գործող հաշվապահների համար կազմակերպվել է «Եկամտային հարկի օրենքը և կիրառման մեխանիզմները» թեմայով վերապատրաստման դասընթաց, 2014թ. հոկտեմբերին՝ «Գունանկար», «Գծանկար», «Կոմպոզիցիա» առարկաների գծով նախապատրաստական դասընթացներ, 2015թ. ապրիլից Անգլերեն լեզվի ուսուցման եռամսյա դասընթաց, որին մասնակցել են ոչ միայն ԵՊՀ ԻՄ-ի դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, այլև Իջևանի դպրոցների 11-12-րդ դասարանների աշակերտներ, Անգլերեն լեզվի ուսուցման կենտրոնի կողմից ստեղծված Խոսակցական անգլերենի, Ընդհանուր անգլերենի և «Կինո» ակումբների անդամները:

ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որը տրամադրվում է մարզի դպրոցներին, տեղեկատվություն է տալիս մասնաճյուղի դասախոսների գիտական աշխատանքների և ձեռքբերումների մասին, նպաստում տարածաշրջանում ու ՀՀ-ում գիտական մտքի զարգացմանը:

Ներկայացնենք քաղաքացի դաստիարակելու գործում մասնաճյուղի ունեցած դերն ու կատարած ներդրումները և նշենք հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ունի առաքելություն՝ պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետ, կրթել ու դաստիարակել հայրենասեր քաղաքացի և նրան փոխանցել գիտելիքներ: Ուսանողին ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակելը նաև ԵՊՀ ԻՄ-ի հիմնական խնդիրներից մեկն է (**ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություն, III/12/8**):

Ուսանողների հետ տարվող աշխատանքները մեծապես նպաստում են պատասխանատու քաղաքացի պատրաստելու առաքելությանը (մանրամասն տե՛ս **չափանիշ 1, չափորոշիչ 1**), և ներկայումս ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտները մարզի և ՀՀ հանրային կյանքի բոլոր ոլորտներում ունեն կարևոր դերակատարություն:

Ուսումնառության չորս տարիների ընթացքում ուսանողների մեջ գիտելիքների հետ սերմանվել են ազնիվ հայրենասիրություն ու մարդասիրություն, բարեկիրթ վարվեցողություն, դժվարությունները հաղթահարելու կամք ու լավատեսություն, սահմանամերձ գոտու վաղվա պաշտպանին՝ թշնամուն հերոսաբար դիմադրելու

զորություն, խաղաղասեր զինվորին՝ ներողամտություն, հանդուրժողություն, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում, սկզբունքայնություն: Դրան է միտված նաև «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբի ծավալած գործունեությունը մասնաճյուղում:

Մեր ուսանողների՝ պատասխանատու քաղաքացի լինելու մասին են վկայում Հայոց բանակից ստացված բազմաթիվ դրական արձագանքները (գովասանական նամակներ, շնորհակալագրեր և այլն):

Մասնաճյուղում ուսումնական ողջ գործընթացի կազմակերպումն ու կառավարումը, կրթական ծրագրերի չափորոշիչները, ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, ուսումնառության և դասավանդման մեթոդները, ուսանողների գնահատման համակարգերը, նյութատեխնիկական հարուստ ռեսուրսների ստեղծումն ունեն մեկ նպատակ՝ ուսանողի հաջողությունը, նրա կարիքների բավարարումը, անձի բազմակողմանի զարգացումը, քննադատական մտածողության, հետազոտական և ստեղծագործ աշխատանքի ունակությունների զարգացումը, արտահայտվելու, հարցադրումներ անելու ազատությունը, որոշումներ կայացնելու ունակության ամրապնդումը:

Ըստ այդմ՝ մեր շրջանավարտներից շատերն այսօր հասարակական կյանքի տարբեր ոլորտների բարձրակարգ աշխատողներ են՝ գյուղապետներ, դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, դասախոսներ և այլն:

ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մեր շրջանավարտներն աչքի են ընկնում աշխատանքային պատասխանատվությամբ, թիմային աշխատանք կատարելու հմտություններով.



Չափանիշ 8 -ի վերաբերյալ ներկայացնենք վերջին 5 տարվա SWOT վերլուծությունը

Ուժեղ կողմեր (Strengths)

1. ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքի առկայությունը
2. Հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուի պաշտոնի առկայությունը
3. PR քաղաքականության առկայությունը
4. «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն
5. Ներքին և արտաքին շահակիցների առջև մասնաճյուղի հաշվետվողականության՝ հստակ մշակված համակարգը
6. Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմների առկայությունը
7. "Facebook" սոցիալական ցանցում գործող մասնաճյուղի տարբեր էջերի ու խմբերի առկայությունը
8. Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմների առկայությունը
9. Բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը, օրինավոր ու հայրենասեր քաղաքացի դաստիարակելու գործում մասնաճյուղի ունեցած համբավը

Թույլ կողմեր (Weaknesses)

1. Հաշվետվողականության համակարգի գնահատման մեխանիզմների անկատարությունը
2. Մասնաճյուղի տրամադրած կրթության որակի նկատմամբ հասարակության և գործատուի կողմից վերահսկողության մեխանիզմների անկատարությունը
3. Մարդկային և նյութական ռեսուրսների սակավությունը հասարակայնության հետ կապերի և մամուլի աշխատանքներում
4. Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմների անկատարությունը և բենչմարքինգի բացակայությունը
5. Հասարակությանը տրամադրվող ծառայությունների և գովազդային նյութերի սակավաթիվությունը
6. Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմների անկատարությունը

Հնարավորություններ (Opportunities)

1. Հասարակության հետ ԵՊՀ ԻՄ-ի կապերի ակտիվ զարգացումը և հանրային ծրագրերում նրա առավելագույնս ներգրավումը
2. Մասնաճյուղի զարգացման ծրագրերում շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների ծավալի մեծացումը
3. ԵՊՀ ԻՄ-ի (որպես հիմնադրամի) կողմից բիզնես-ծրագրերի մշակումը և իրականացումը

4. ԵՊՀ-ի համապատասխան կառույցների աջակցությունը և ռեսուրսների օգտագործումը
5. Համագործակցությունը տարածաշրջանի հասարակական, կրթական, տնտեսական և մշակութային կառույցների հետ

Վտանգներ (Threats)

1. Որակյալ կադրերի արտագաղթը
2. Հասարակության անտարբերությունը մասնաճյուղում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ
3. Տարածաշրջանի որոշ համայքներում համացանցի անհասանելիությունը
4. Ֆինանսական մուտքերի նվազումը

Վերը նշված հնարավոր վտանգներից խուսափելու և հայտնաբերված թերությունները վերացնելու համար մասնաճյուղը նախատեսում է՝

1. Կատարելագործել հաշվետվողականության համակարգի գնահատման մեխանիզմները
2. Ուղիներ որոնել հասարակության և գործատուի կողմից կրթության որակի վերահսկման արդյունավետության բարձրացման ուղղությամբ
3. Ընդլայնել մարդկային ու նյութական ռեսուրսները հասարակայնության հետ կապերի և մամուլի աշխատանքներում
4. Բարելավել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները և բենչմարքինգ իրականացնել
5. Բազմազանեցնել հասարակությանը տրամադրվող ծառայությունները և գովազդային նյութերը (մասնաճյուղի վերաբերյալ ֆիլմ նկարահանել, սկավառակներ պատրաստել և այլն)
6. Կատարելագործել հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմները
7. Ֆինանսական մուտքերի նվազումը կանխելու նպատակով մշակել և իրականացնել տարբեր բիզնես-ծրագրեր: